

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ապրիլի 2005 թվականի N 540-Ն

ԾԽԱԽՈՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

ա) սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամսվա ընթացքում՝ օրենքով սահմանված կարգով հաստատել ծխախոտահումքում և ծխախոտային արտադրատեսակներում ռադիոնուկլիդների որոշման մեթոդիկաները.

բ) («բ» ենթակետն ուժը կորցրել է 06.07.06 N 968-Ն)

(2-րդ կետը փոփ. 15.11.05 N 1957-Ն, 06.07.06 N 968-Ն)

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող սիգարետների վրա պարտադիր նշագրելու մասին» N 16 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ սույն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական կանոնակարգի 16-րդ կետի «բ» ենթակետի, 17-րդ և 20-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2008 թվականի փետրվարի 1-ից:

(4-րդ կետը փոփ. 06.07.06 N 968-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. մայիսի 13
Երևան

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Ծ Խ Ա Ն Ո Տ Ի Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

I. Կ Ի Ր Ա Ռ Մ Ա Ն Ո Լ Ո Ր Տ Ը

1. Ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան հետևյալ ծխախոտային հումքի (ծխախոտահումք) և ծխախոտային արտադրատեսակների վրա՝

ծխախոտահումք, ծխախոտահումքի մնացուկներ 2401,

սիգարներ, կտրած ծայրերով սիգարներ, սիգարիլլաներ,

սիգարետներ՝ ծխախոտահումքից կամ ծխախոտահումքի և դրա փոխարինիչների խառնուրդներից 2402,

այլ արդյունաբերական պատրաստման ծխախոտային արտադրատեսակներ (ծխամորճի և ծխելու ծխախոտներ, որոնք պարունակում են ցանկացած համամասնությամբ փոխարինիչներ կամ չեն պարունակում) 2403:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են 1-ին կետում ներկայացված ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը և պահմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում ծխախոտահումքի արդյունաբերական փոխարինիչների և ամբողջությամբ դրանցից պատրաստված ծխախոտային արտադրատեսակների, դեղային սիգարետների, «վերականգնված» ծխախոտի, ծամախոտի, քթախոտի, ծխախոտի լուծամզուքների և էսենցիաների վրա:

4. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետում ներկայացված ծխախոտահումքը և ծխախոտային արտադրատեսակները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

II. Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Ս Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն բաժնով նախատեսված հետևյալ հասկացությունները՝

Ծխախոտահումք՝ ծխախոտաբույսերից (սիկոտիանա) ստացված հումք, որն ամբողջական բույսն է կամ տերևները՝ բնական վիճակում կամ չորացրած կամ ֆերմենտացված կամ առանձնացված մեջտեղի երակաթելով, կտրատած կամ ոչ, ձգման կամ ջարդած, տեսակախառնած և խոնավացրած

հատուկ բաղադրությամբ հեղուկով, ինչպես նաև ծխախոտաբույսի մնացուկները, պարունակում է նիկոտին և նախատեսված է ծխախոտային արտադրատեսակների պատրաստման համար:

Ծխախոտահումքի արդյունաբերական փոխարինիչ` ծխելու համար նախատեսված բույսերի խառնուրդ, որը չի պարունակում ծխախոտաբույսեր:

սպառողական տարա` տարա, որով իրացվում է արտադրատեսակը և որը փոխադրական տարա չէ:

փոխադրական տարա` տարա, որը կազմում է ինքնուրույն փոխադրական միավոր:

տուփ` սպառողական տարայի միավոր, որը պարունակում է որոշակի քանակով ծխախոտային արտադրատեսակ:

(7-րդ պարբերությունն ուժը կորցրել է 06.07.06 N 968- Ն)

բոքս` խմբակային սպառողական տարայի միավոր, որը պատրաստված է տուփի ստվարաթղթից կամ պիտակային թղթից և պարունակում է որոշակի քանակությամբ սիգարետներով տուփեր:

բլոկ` խմբակային սպառողական տարայի միավոր, որը պարունակում է թղթով կամ պոլիմերային թաղանթով փաթաթված կամ թղթե ժապավենով փաթաթված որոշակի քանակությամբ սիգարետներով կամ ծխազլանակներով տուփեր:

Ծխախոտային արտադրատեսակի խմբաքանակ` միևնույն մակնիշի և փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակի քանակ, որը նախատեսված է վերահսկման համար:

Ծխախոտային արտադրատեսակի մակնիշ` որոշակի սպառողական հատկություններ ունեցող ծխախոտային արտադրատեսակի անվանում:

(5-րդ կետը փոփ. 06.07.06 N 968- Ն)

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների իրացումն առանց համապատասխանության հավաստման արգելվում է:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող ծխախոտահումքը և ծխախոտային արտադրատեսակները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ կամ համապատասխանության սերտիֆիկատով:

IV. ՏԵՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

8. Ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների անվտանգությունը բնութագրող ճուշանիշները ներկայացված են սույն տեխնիկական կանոնակարգի NN 1 և 2 աղյուսակներում և 9-13-րդ կետերում:

ԾԽԱԽՈՏԱՀՈՒՄՔԻ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Աղյուսակ N 1

Ցուցանիշի անվանումը	Ծխախոտահումքը			
	չֆերմենտացված		ֆերմենտացված	
	-	սիգարի	-	սիգարի
Խոնավությունը, %`				

փաթեթավորված կապոցներով փաթեթավորված հակերով ցանկացած փաթեթավորմամբ	21, ոչ ավելի 17, ոչ ավելի -	- - 30, ոչ ավելի	- - 11 - 18	- - 25, ոչ ավելի
Աղբոսվածությունը հողով և ավազով, %, ոչ ավելի	3,0	3,0	3,0	3,0
Ֆերմենտացվածությունը, սմ ³ թթվածին	-	-	0,1	

(Աղյուսակը փոփ. 06.07.06 N 968- Ն)

ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱՂԴԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ N 2

Ծխախոտային արտադրատեսակը	Ցուցանիշի անվանումը	Նորմը
Սիգարետ	խոնավությունը, %	11 - 15
	նիկոտինի պարունակությունը մեկ սիգարետի ծխում, մգ/սիգ, ոչ ավելի. սիգարետ` ֆիլտրով սիգարետ` առանց ֆիլտրի	1,2 1,3
	խեժի պարունակությունը մեկ սիգարետի ծխում, մգ/սիգ, ոչ ավելի. սիգարետ` ֆիլտրով սիգարետ` առանց ֆիլտրի	14,0 16,0
Սիգար, սիգարիլլա	խոնավությունը, %	10 - 14
Ծխազլանակ		11 - 15
Ծխելու ծխախոտ		12 - 16
Ծխամորճի ծխախոտ		11,5 - 15,5

9. Ծխախոտահումքում և ծխախոտային արտադրատեսակներում պեստիցիդների` հեքսաքլորցիկլոհեքսանի (ՀՔՑՀ) և դրա իզոմերների և երկքլորերկֆենիլեռաքլորեթանի (ԴԴՏ) և դրա մետաբոլիտների մնացորդային քանակությունները չպետք է գերազանցեն 0,7 մգ/կգ:

10. Ծխախոտահումքում և ծխախոտային արտադրատեսակներում ռադիոնուկլիդների քանակությունը չպետք է գերազանցի`

ցեզիում - 137` 120 Բկ/կգ,

ստրոնցիում - 90` 40 Բկ/կգ:

11. Ծխախոտահումքում չի թույլատրվում ցրտահարված, բորբոսնած, նեխած, կողմնակի հոտերով տերևների և դրանց պատառների առկայությունը:

12. Ծխախոտային արտադրատեսակներում չի թույլատրվում բորբոսահոտ, նեխահոտ և ծխախոտներին ոչ բնորոշ այլ կողմնակի հոտերի առկայությունը՝ բացառությամբ հատուկ բուրավետացման համար կիրառվող նյութերի հոտերի:

13. Ծխախոտահումքում տերևների հիվանդություններով և վնասատուներով վնասվածության մակերևույթը չպետք է գերազանցի 70 տոկոսը:

ԾԽԱԽՈՏԱՀՈՒՄՔԻ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՈՒ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

14. Ծխախոտահումքի հակերի, կապոցների, տակառների, զամբյուղների վրա տրանսպորտային մականշվածքը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

ա) արտադրողի անվանումը և գտնվելու վայրը,

բ) ծխախոտահումքի անվանումը, տեսակը,

գ) ֆերմենտացվածությունը (եթե ծխախոտահումքը ֆերմենտացված է),

դ) գտաքաշը և համաքաշը,

ե) բերքահավաքի տարեթիվը,

զ) թունաքիմիկատներով վերջին մշակման թվականը և դրանց անվանումները (չֆերմենտացված ծխախոտահումքի համար),

է) վարվելակարգային նշանները՝ «Պահպանել խոնավությունից», «Պահպանել արևի ճառագայթներից»՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված բեռների մականշման ստանդարտի:

15. Ծխախոտային արտադրատեսակների ծխախոտի տուփի յուրաքանչյուր միավորը, ինչպես նաև բոքսը և ծխամորձի ու ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթում տեղադրվող ներդիր թերթիկը պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝

ա) արտադրանքի անվանումը («Սիգարետներ», «Ծխազլանակներ», «Սիգարներ», «Սիգարիլլաներ», «Ծխամորձի ծխախոտ» կամ «Ծխելու ծխախոտ»),

բ) մականիշը կամ ապրանքային նշանը,

գ) արտադրողի և լիցենզավորողի (առկայության դեպքում) անվանումները և գտնվելու վայրը կամ այն կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, որն արտադրող կազմակերպությունում հսկում է իրեն պատկանող մականիշների ծխախոտային արտադրատեսակների արտադրության գործընթացը, օգտագործվող հումքը և որակը՝ այդ դեպքում մականշվածքում նշելով նաև արտադրողի երկիրը,

դ) Հայաստանի Հանրապետությունում սպառողների բողոքներն ընդունող կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը (եթե արտադրողը գտնվում է այլ երկրում),

ե) ֆիլտրի առկայությունը,

զ) քանակը՝ հատերով կամ զանգվածը՝ գրամներով (ծխամորձի և ծխելու ծխախոտի համար),

է) մենթոլի առկայությունը,

ը) ծխելու վնասակարության վերաբերյալ հիմնական և լրացուցիչ նախազգուշացումները՝ սույն տեխնիկական կանոնակարգի 16-րդ և 17-րդ կետերին համապատասխան,

թ) նիկոտինի և խեժի պարունակությունը մեկ սիգարետի ծխում (միայն սիգարետների համար)՝ սույն տեխնիկական կանոնակարգի 19-րդ կետին համապատասխան:

(15-րդ կետը փոփ. 06.07.06 N 968-Ն, խմբ., փոփ. 11.01.07 N 68-Ն)

16. Մարդու առողջության վրա ծխախոտի ունեցած բացասական ազդեցության մասին նախազգուշացման տեքստերը լինում են՝

ա) հիմնական նախազգուշացման տեքստով՝ «Ծխելը վնասակար է առողջությանը»,
բ) լրացուցիչ նախազգուշացման տեքստերով.

«Ծխելն առաջացնում է թոքի քաղցկեղ»,

«Պահպանեք երեխաներին՝ թույլ մի տվեք նրանց շնչել ծխախոտի ծուխը»,

«Ծխելը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային»,

«Ծխելն առաջացնում է սիրտ-անոթային հիվանդություններ»:

(16-րդ կետը խմբ. 06.07.06 N 968-Ն, փոփ. 11.01.07 N 68-Ն)

17. Ծխելու վնասակարության վերաբերյալ հիմնական նախազգուշացման տեքստը պետք է զետեղվի ցանկացած տուփի 2 առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ նախազգուշացման տեքստը՝ մյուսի վրա: Նախազգուշացման տեքստերը պետք է ներառվեն սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնեն ծխախոտային արտադրատեսակների մեծածախ ու մանրածախ առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բոքսի) 2 առավել մեծ կողմերից յուրաքանչյուրի մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը, ներառյալ շրջանակը, և համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգում տրված օրինակներին (NN 1 և 2 ձևեր) և հետևյալ պահանջներին՝

ա) նախազգուշացման տեքստերը պետք է տպված լինեն այնպես, որ բացառվի դրանք հեռացնելու հնարավորությունը և տպված լինեն՝

հստակ ու ընթեռնելի,

մուգ թանաքով՝ հակադիր ֆոնի վրա,

Արիալ Արմենիան (Arial Armenian) թավ տառատեսակով, հիմնական նախազգուշացման տեքստը՝ մեծատառերով, լրացուցիչ նախազգուշացման տեքստերը՝ փոքրատառերով, բացառությամբ առաջին տառի՝ մեծատառ.

բ) հիմնական և լրացուցիչ նախազգուշացման տեքստերը շրջագծող շրջանակի հաստությունը պետք է լինի 3-ից մինչև 4 մմ.

գ) տառատեսակի չափը պետք է ընտրված լինի այնպես, որ նախազգուշացման տեքստերը զբաղեցնեն դրանց համար նախատեսված մակերեսի հնարավոր առավելագույն մասը.

դ) նախազգուշացման տեքստերը պետք է գտնվեն դրանց համար նախատեսված մակերևույթի կենտրոնում, տուփի վերին եզրին զուգահեռ և բացելիս հնարավոր լինի խուսափել այն վնասելուց.

ե) նախազգուշացման տեքստերը չպետք է՝

տպագրվեն կամ ամրացվեն թափանցիկ կամ արտաքին փաթեթավորման տարր համարվող թղթի վրա,

թաքնված կամ ծածկված լինեն այլ տպագրված տեղեկատվությամբ կամ պատկերով,

տպագրված լինեն սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բոքսի) ակցիզային

դրոշմանիշերի վրա:

Ծխամորձի և ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթավածքների դեպքում՝ սույն տեխնիկական կանոնակարգի 16-րդ կետով նախատեսված՝ ծխելու վնասակարության վերաբերյալ նախազգուշացումների տեքստերը պետք է զետեղվեն ներդիր թերթիկի վրա և զբաղեցնեն դրա մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը:

Սույն տեխնիկական կանոնակարգի 16-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված 4 տարբերակով

լրացուցիչ նախագգուշացման տեքստերից յուրաքանչյուրը պետք է նշված լինի մոտավորապես հավասար քանակով ծխախոտային արտադրատեսակների սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բոքսի) վրա, ինչը կապահովի բոլոր լրացուցիչ նախագգուշացման տեքստերի պարբերաբար երևալու հնարավորությունը:

(17-րդ կետը խմբ., լրաց. 06.07.06 N 968-Ն, խմբ. 11.01.07 N 68-Ն)

18. Հայաստանի Հանրապետությունում սպառողների բողոքներն ընդունող կազմակերպության մասին տեղեկատվությունը թույլատրվում է զետեղել տուփի ներսում՝ կարդալու համար հարմար տեղում:

19. Նիկոտինի և խեժի պարունակության վերաբերյալ տեքստը պետք է ներառվի սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնի մեծածախ ու մանրածախ առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բոքսի) կողմնային մակերևույթի 10 տոկոսից ոչ պակաս մակերեսը՝ ներառյալ շրջանակը, և համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգում տրված օրինակներին (NN 1, 2 ձևեր) և հետևյալ պահանջներին՝

ա) նիկոտինի և խեժի պարունակության վերաբերյալ տեքստը պետք է տպված լինի այնպես, որ բացառվի դրա հեռացնելու հնարավորությունը և լինի տպված՝

հստակ ու ընթեռնելի,

մուգ թանաքով՝ հակադիր ֆոնի վրա,

Արիալ Արմենիան (Arial Armenian) թավ տառատեսակով, «Նիկոտին» և «Խեժ» բառերը՝ մեծատառերով, նիկոտինի և խեժի չափման միավորները՝ փոքրատառերով:

բ) նիկոտինի և խեժի պարունակության վերաբերյալ տեքստը շրջագծող շրջանակի հաստությունը պետք է լինի 3-ից մինչև 4 մմ:

գ) տառատեսակի չափը պետք է ընտրված լինի այնպես, որ նիկոտինի և խեժի պարունակության վերաբերյալ տեքստը զբաղեցնի դրա համար նախատեսված մակերեսի հնարավոր առավելագույն մասը:

դ) նիկոտինի և խեժի պարունակության վերաբերյալ տեքստը պետք է տպված լինի դրա համար նախատեսված մակերևույթի կենտրոնում, տուփի կողմնային եզրին զուգահեռ և բացելիս հնարավոր լինի խուսափել այն վնասելուց:

ե) նիկոտինի և խեժի պարունակության վերաբերյալ տեքստը չպետք է՝

տպագրվի կամ ամրացվի թափանցիկ կամ արտաքին փաթեթավորման տարր համարվող թղթի վրա:

թաքնված կամ ծածկված լինի տպագրված այլ տեղեկատվությամբ կամ պատկերով,

տպագրված լինի սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի) ակցիզային դրոշմանիշերի վրա:

(19-րդ կետը փոփ. 06.07.06 N 968-Ն, խմբ. 11.01.07 N 68-Ն)

20. Թույլատրվում է ծխախոտահումքի տրանսպորտային փաթեթվածքի, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների տուփերի, բոքսերի ծխամորճի և ծխելու ծխախոտների, ներդիր թերթիկների վրա արտադրանքը բնութագրող այլ տեղեկությունների լրացուցիչ զետեղումը, որոնք չեն հակասում սույն տեխնիկական կանոնակարգի 14-րդ և 15-րդ կետերում նշված տվյալներին, սակայն չի թույլատրվում «Նիկոտինի (խեժի) ցածր պարունակություն», «Թեթև», «Շատ թեթև» («Գերթեթև»), «Փափուկ», «Յուրահասուկ ֆիլտր» կամ ցանկացած այլ՝ մոլորության մեջ զգող տերմինների օգտագործումը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում են տվյալ ծխախոտային արտադրատեսակի պակաս վտանգավոր լինելու մասին կարծիքի ձևավորմանը:

(20-րդ կետը խմբ. 06.07.06 N 968-Ն, լրաց. 11.01.07 N 68-Ն)

21. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետությունում իրացվող` Հայաստանի Հանրապետությունում արտադրվող կամ ներմուծվող ծխախոտային արտադրատեսակների մասին սույն կանոնակարգի 15-րդ և 20-րդ կետերում նշված տեղեկատվության տրամադրումը` հայերենով:

Արտադրողի ու լիցենզավորողի անվանումները և ծխախոտային արտադրատեսակների մակնիշները կարող են ներկայացվել լատիներեն տառերով:

(21-րդ կետը փոփ. 15.11.05 N 1957-Ն, 06.07.06 N 968-Ն)

22. Ծխախոտահումքը պետք է պահվի չոր, մաքուր, լավ օդափոխվող, ամբարային վնասատուներով չվարակված պահեստներում, որոնց հատակը պետք է լինի փայտե` առանց ճեղքերի: Եթե հատակը փայտե չէ, ապա կապոցներն ու հակերը պետք է դասավորվեն փայտե տախտակամածի վրա:

Ծխախոտային արտադրատեսակները պետք է պահվեն հողի մակերևույթից բարձր հատակ ունեցող չոր, մաքուր, (60 ± 10) տոկոս օդի հարաբերական խոնավությամբ սենքերում և դասավորված լինեն սենքի հատակից առնվազն 10 սանտիմետր բարձր:

(22-րդ կետը փոփ. 11.01.07 N 68-Ն)

V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

23. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ունենան Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի «Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը սահմանելու մասին» N 1170-Ն որոշմամբ սահմանված 2ա, 3ա, 4ա, 5ա կամ 6ա սխեմաներով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

24. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների սպառողական և փոխադրական տարաների վրա կամ ապրանքաուղեկից փաստաթղթերում կարող են նշել համապատասխանության նշանը` Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» N 1281-Ն որոշմամբ սահմանված կարգով:

25. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ` տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով` սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների ստանդարտներով սահմանված նմուշառման կարգին համապատասխան:

26. Ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների նույնականացման գործընթացում ստուգվում են սպառողական կամ փոխադրական տարաների կամ պիտակների վրա կատարված մականշվածքի համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթում ներկայացված տեղեկատվությանը:

27. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում ներկայացված ստանդարտներով սահմանված փորձարկման մեթոդներով:

Ռադիոնուկլիդների պարունակությունը պետք է որոշվի Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի կողմից հաստատված մեթոդներով:

(27-րդ կետը փոփ. 15.11.05 N 1957-Ն, 06.07.06 N 968-Ն)

28. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ իրականացված համապատասխանության հավաստման սխեմայի՝

2ս կամ 6ս սխեմայի դեպքում՝ 12 ամիս,

3ս սխեմայի դեպքում՝ 24 ամիս,

4ս կամ 5ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս:

29. Մերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացման գործողությունները կատարվել են 2ս, 3ս, 4ս և 5ս սխեմաներից որևէ մեկով:

30. Մերտիֆիկացված ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ՝ սույն տեխնիկական կանոնակարգի 29-րդ կետում նշված պայմանագրի հիման վրա:

31. «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանելու իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ այն կասեցնելու կամ դադարեցնելու: Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

32. Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը դրա մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին և գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին:

VI. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

33. Ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների չափումների միասնականությունը պետք է ապահովվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

34. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VIII. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը (կետը)	Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
ԳՕՍՍ 858 (6.1, 6.3 կետերը)	Ծխախոտ ծխելու. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 1505 (6.1, 6.5 կետերը)	Ծխազլանակներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 3713 (3.1, 3.2, 3.3, 3.5, 3.6 կետերը)	Ծխախոտահումք սիգարի չֆերմենտացված. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 3714 (3.1, 3.2, 3.3, 3.5, 3.6, 3.7 կետերը)	Ծխախոտահումք սիգարի ֆերմենտացված. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 3935 (6.1, 6.3 կետերը)	Սիգարետներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 7823 (6.1, 6.3 կետերը)	Ծխախոտ ծխամորճի. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 8072 (4.1, 4.2, 4.3, 4.4, 4.5 կետերը)	Ծխախոտահումք ֆերմենտացված. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 8073 (4.1, 4.2, 4.3, 4.4 կետերը)	Ծխախոտահումք չֆերմենտացված. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 8699 (3.1, 3.2 կետերը)	Սիգարներ. Տեխնիկական պայմաններ
ԳՕՍՍ 14192 (4.1, 4.2 կետերը)	Մակնշում բեռների
ԳՕՍՍ 30039 (ԻՍՕ 8243)	Սիգարետներ. Նմուշառում
ԳՕՍՍ 30040 (ԻՍՕ 4874)	Ծխախոտ. Նմուշառում հումքի խմբաքանակներից. Հիմնական դրույթներ
ԳՕՍՍ 30570 (ԻՍՕ 10315)	Սիգարետներ. Ծխի խտուցքում նիկոտինի պարունակության որոշումը գազային քրոմատագրման մեթոդով
ԳՕՍՍ 30571 (ԻՍՕ 4987)	Սիգարետներ. Սիգարետների ծխում խոնավ և նիկոտին չպարունակող չոր կոնդենսատի (խեժի) պարունակության որոշումը լաբորատոր ծխելու մեքենայի օգնությամբ
(Տողը հանվել է 06.07.06 N 968-Ն)	
(Տողը հանվել է 06.07.06 N 968-Ն)	
(Տողը հանվել է 06.07.06 N 968-Ն)	
ՀՍՍ ԻՍՕ 4389	Ծխախոտահումք և ծխախոտային արտադրատեսակներ. Քլորօրգանական պեստիցիդների մնացորդային քանակների որոշում.

(Ցանկը լրաց 15.11.05 N 1957-Ն, փոփ, լրաց 06.07.06 N 968-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
հունվարի 11-ի N 68-Ն որոշման

Ձև N 1

ԾԽԱԽՈՏԻ ՏՈՒՓԻ ՎՐԱ ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՆԻԿՈՏԻՆԻ ԵՎ ԽԵԺԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՁԵՏԵՂՄԱՆ
ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

(N 1 ձևը լրաց 11.01.07 N 68-Ն)

Ձև N 2

էջ 1, 2, 3

ԲՈՔՄԻ ՎՐԱ ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒ
ՆԻԿՈՏԻՆԻ ԵՎ ԽԵԺԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՁԵՏԵՂՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
(N 2 ձևը լրաց 11.01.07 N 68-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան